

ՈՉ ՊՍՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 2001/84/ԵՀ հրահանգ

Վերավաճառքից վարձատրություն ստանալու՝ արվեստի ստեղծագործության բնօրինակի հեղինակի իրավունքի մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը²,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածում սահմանված ընթացակարգին համապատասխան³ և համաձայն Համաձայնեցման կոմիտեի կողմից 2001 թվականի հունիսի 6-ին հաստատված համատեղ տեքստի,

Քանի որ.

- 1) հեղինակային իրավունքի բնագավառում վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը տվյալ ստեղծագործության հետագա վաճառքից ստացված տնտեսական շահի՝ չփոխանցվող և անօտարելի իրավունք է, որը պատկանում է գրաֆիկական կամ պլաստիկ արվեստի ստեղծագործության բնօրինակի հեղինակին,
- 2) վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքն արտադրողական բնույթ ունի, որը հնարավորություն է տալիս հեղինակին փոխհատուցում ստանալ ստեղծագործության հետագա փոխանցման համար: Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի առարկան աշխատանքի ֆիզիկական արդյունքն է, այսինքն այն կրիչը, որի վրա ամրագրվում է պահպանվող ստեղծագործությունը,
- 3) վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի նպատակն է՝ ապահովել, որ գրաֆիկական ու պլաստիկ արվեստի ստեղծագործությունների հեղինակները մասնաբաժին ստանան իրենց արվեստի ստեղծագործության բնօրինակների տնտեսական հաջողությունից: Այն օգնում է վերականգնել գրաֆիկական ու պլաստիկ արվեստի ստեղծագործությունների հեղինակների և այն ստեղծագործողների տնտեսական վիճակի հավասարակշռությունը, որոնք օգուտ են ստանում իրենց ստեղծագործությունների հետագա գործածումից,

¹ ՊՏ, C 178, 21.06.1996թ., էջ 16 և ՊՏ, C 125, 23.04.1998թ., էջ 8:

² ՊՏ, C 75, 10.03.1997թ., էջ 17:

³ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին հաստատված՝ Եվրոպական պառլամենտի 1997 թվականի ապրիլի 9-ի եզրակացություն (ՊՏ, C 132, 28.04.1997թ., էջ 88), Խորհրդի 2000 թվականի հունիսի 19-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ, C 300, 20.10.2000թ., էջ 1) և Եվրոպական պառլամենտի 2000 թվականի դեկտեմբերի 13-ի որոշում (ՊՏ, C 232, 17.08.2001թ., էջ 173): Եվրոպական պառլամենտի 2001 թվականի հուլիսի 3-ի որոշում և Խորհրդի 2001 թվականի հուլիսի 19-ի որոշում:

4) վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը կազմում է հեղինակային իրավունքի անբաժանելի մասը և հեղինակների համար կարևոր արտոնություն է: Բոլոր անդամ պետություններում նման իրավունք սահմանելը բավարարում է ստեղծագործողներին համապատասխան ու սահմանված մակարդակով պաշտպանություն ապահովելու անհրաժեշտությանը,

5) Պայմանագրի հոդված 151«4»-ի համաձայն՝ Պայմանագրի այլ դրույթներին համապատասխան գործելիս Համայնքը պետք է հաշվի առնի մշակութային հայեցակետերը,

6) «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին» Բեռնի կոնվենցիան սահմանում է, որ վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքն առկա է միայն հեղինակի երկրի օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում: Ուստի այդ իրավունքի տրամադրումը կամընտիր է և ենթակա է փոխադարձության կանոնին: Պայմանագրի 12-րդ հոդվածով սահմանված՝ խտրականության բացառման սկզբունքի կիրառման մասին Եվրոպական համայնքների արդարադատության դատարանի նախադեպային իրավունքից հետևում է, ինչպես ներկայացված է 1993 թվականի հոկտեմբերի 20-ի Ֆիլ Քոլինզը և մյուսները C-92/92 և C-326/92 միացյալ գործերով վճռում⁴, որ անդամ պետությունները չեն կարող փոխադարձության մասին դրույթներ պարունակող ներպետական նորմերը վկայակոչել որպես այլ անդամ պետությունների քաղաքացիներին այն իրավունքները չտրամադրելու հիմք, որոնք վերապահված են իրենց քաղաքացիները հանդիսացող հեղինակներին: Համայնքի համատեքստում նման դրույթների կիրառումը հակասում է հավասար վերաբերմունքի սկզբունքին, որը բխում է քաղաքացիության վրա հիմնված ցանկացած խտրականության արգելքից,

7) մոդեռն և ժամանակակից արվեստի Համայնքի շուկայի միջազգայնացման գործընթացը, որը ներկայումս արագանում է նոր տնտեսության ազդեցությամբ, այն կարգավորման համատեքստում, որի համաձայն ԵՄ-ից դուրս մի քանի պետություններ ճանաչում են վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը, Եվրոպական համայնքի համար արտաքին ոլորտում էական է դարձնում Բեռնի կոնվենցիայի հոդված 14բ-ն պարտադիր դարձնելուն ուղղված բանակցություններ սկսելը,

8) այդ միջազգային շուկայի գոյության փաստը՝ որոշ անդամ պետություններում վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի բացակայության և այդ իրավունքը ճանաչող ներպետական համակարգերի միջև առկա անհամապատասխանության հետ մեկտեղ, էական են դարձնում այդ իրավունքն ուժի մեջ մտնելու և դրա նյութաիրավական կարգավորման վերաբերյալ անցումային դրույթներ սահմանելը, ինչը կպահպանի եվրոպական շուկայի մրցունակությունը,

9) ներկայումս վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը նախատեսված է անդամ պետությունների մեծ մասի ներպետական օրենսդրությամբ: Գոյություն ունեցող նման իրավական ակտերը ցուցաբերում են որոշակի տարբերություններ, հատկապես, եթե խոսքը գնում է այն ստեղծագործությունների մասին, որոնց վրա դրանք տարածվում են, հեղինակային վարձատրություն ստանալու իրավունք ունեցողների, կիրառվող դրույքաչափերի, այն գործարքների մասին, որոնց դեպքում պետք է վճարվի հեղինակային վարձատրություն, և այդ ամենի հաշվարկման հիմքերի մասին: Այդ իրավունքը կիրառելը կամ չկիրառելը էական ազդեցություն է գործում ներքին շուկայում առկա մրցակցային միջավայրի վրա, քանի որ վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի հիմքով վճարելու պարտականության առկայությունը կամ բացակայությունը մի բաղադրիչ է, որը պետք է հաշվի առնի արվեստի ստեղծագործություն վաճառել ցանկացող յուրաքանչյուր

⁴ [1993] ECR I-5145

անհատ: Ուստի այս իրավունքը մի գործոն է, որը նպաստում է մրցակցության խաթարմանը, ինչպես նաև Համայնքում իրական վաճառքի ծավալների կրճատմանը,

10) վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի գոյությանը և անդամ պետությունների կողմից դրա կիրառմանը վերաբերող նման անհամապատասխանություններն ուղղակի ու բացասական ազդեցություն են գործում արվեստի ստեղծագործությունների ներքին շուկայի պատշաճ գործունեության վրա, ինչպես նախատեսված է Պայմանագրի 14-րդ հոդվածով: Նման իրավիճակում Պայմանագրի 95-րդ հոդվածը հանդես է գալիս որպես համապատասխան իրավական հիմք,

11) Համայնքի՝ Պայմանագրում սահմանված նպատակներից են Եվրոպայի ժողովուրդների միջև երբևէ գոյություն ունեցած ամենասերտ միության հիմքերը դնելը՝ նպաստելով Համայնքի կազմի մեջ մտնող անդամ պետությունների միջև առավել սերտ կապերի հաստատմանը և ապահովելով նրանց տնտեսական ու սոցիալական առաջընթացը՝ Եվրոպայի բաժանող խոչընդոտները վերացնելուն ուղղված համատեղ գործողությունների միջոցով: Այդ նպատակով Պայմանագրով նախատեսվում է ստեղծել ներքին շուկա, որը ենթադրում է ապրանքների ազատ տեղաշարժի, ծառայությունների մատուցման ազատության ու հիմնադրման ազատության խոչընդոտների վերացում, ինչպես նաև ներմուծել մի համակարգ, որը կապահովի, որպեսզի մրցակցությունն ընդհանուր շուկայում չխաթարվի: Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի մասին անդամ պետությունների իրավական ակտերի համապատասխանեցումը նպաստում է այդ նպատակների իրականացմանը,

12) անդամ պետությունների՝ ապրանքաշրջանառության հարկերի (ավելացված արժեքի հարկի ընդհանուր համակարգ. գնահատման միասնական հիմք)⁵ վերաբերյալ իրավական ակտերի համապատասխանեցման մասին Խորհրդի 1977 թվականի մայիսի 17-ի թիվ 77/388/ԵՏՀ Վեցերորդ հրահանգը՝ աստիճանաբար ներմուծում է Համայնքի հարկման համակարգ, որն ի թիվս այլոց կիրառվում է արվեստի ստեղծագործությունների նկատմամբ: Հարկային դաշտով սահմանափակված միջոցները բավարար չեն արվեստի շուկայի ներդաշնակ գործունեությունը երաշխավորելու համար: Այդ նպատակին հնարավոր չէ հասնել առանց վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի ոլորտում համապատասխանեցման,

13) իրավական ակտերի միջև առկա տարբերությունները պետք է վերացվեն, եթե դրանք խաթարում են ներքին շուկայի գործունեությունը, և նմանատիպ ցանկացած նոր տարբերության ի հայտ գալը պետք է կանխվի: Անհրաժեշտություն չկա վերացնելու կամ կանխարգելելու այնպիսի տարբերությունների ի հայտ գալը, որոնք չեն սպառնում ազդել ներքին շուկայի գործունեության վրա,

14) ներքին շուկայի պատշաճ գործունեության նախապայման է մրցակցության չխաթարված պայմանների առկայությունը: Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի մասին ներպետական դրույթների միջև տարբերությունների առկայությունը Համայնքում առաջացնում է մրցակցության խաթարում և իրական վաճառքի ծավալների կրճատում և հանգեցնում է հեղինակների նկատմամբ անհավասար վերաբերմունքի՝ կախված նրանց ստեղծագործությունների վաճառքի վայրից: Ուստի, քննարկվող խնդիրն ունի անդրազգային հայեցակետեր, որոնք չեն կարող բավարար կերպով կարգավորվել անդամ պետությունների կողմից իրականացվող գործողություններով: Համայնքի կողմից գործողություններ

⁵ ՊՏ, L 145, 13.06.1977թ., էջ 1: Թիվ 1999/85/ԵՄ հրահանգով (ՊՏ, L 277, 28.10.1999թ., էջ 34) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

չձեռնարկելը կհակասեր Պայմանագրի՝ մրցակցության խաթարումներն ու անհավասար վերաբերմունքը վերացնելու պահանջին,

15) նկատի ունենալով ներպետական դրույթների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունների ծավալը՝ անհրաժեշտ է ընդունել համապատասխանեցնող ակտեր այն ոլորտներում անդամ պետությունների իրավական ակտերում առկա անհամապատասխանությունները հասցեագրելու նպատակով, որոնցում դրանք կհանգեցնեն մրցակցության խաթարված պայմանների ստեղծմանը կամ պահպանմանը: Այնուամենայնիվ, անհրաժեշտություն չկա համապատասխանեցնելու անդամ պետությունների՝ վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի մասին իրավական ակտերի յուրաքանչյուր դրույթ և, որպեսզի համապատասխան հարցերի հնարավորինս լայն շրջանակի կարգավորումը իրականացվի ներպետական մակարդակով, բավարար է համապատասխանեցման գործընթացը սահմանափակել այն ներպետական դրույթներով, որոնք առավել անմիջականորեն են ազդում ներքին շուկայի գործունեության վրա,

16) ուստի, սույն Հրահանգն ամբողջությամբ համապատասխանում է լրացուցչության (subsidiarity) և համաչափության սկզբունքներին, ինչպես սահմանված է Պայմանագրի 5-րդ հոդվածով,

17) «Հեղինակային և որոշ հարակից իրավունքների պահպանության ժամկետի համապատասխանեցման մասին» Խորհրդի 1993 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 93/98/ ԵՏՀ հրահանգի⁶ համաձայն՝ հեղինակային իրավունքները պահպանվում են հեղինակի մահից հետո 70 տարի: Նույն ժամկետը պետք է սահմանվի վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի համար: Հետևաբար, վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը կարող է տարածվել միայն մոդեռն և ժամանակակից արվեստի ստեղծագործությունների բնօրինակների վրա:

Այնուամենայնիվ, որպեսզի անդամ պետություններին, որոնց իրավական համակարգերը սույն Հրահանգի ընդունման պահին հեղինակների օգտին չեն կիրառում վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը, այդ իրավունքն իրենց համապատասխան իրավական համակարգերում ներառելու հնարավորություն տրվի, և ավելին, որպեսզի այդ անդամ պետությունների տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն տրվի աստիճանաբար հարմարվելու վերը նշված իրավունքին՝ միաժամանակ պահպանելով իրենց տնտեսական կենսունակությունը, շահագրգիռ անդամ պետություններին պետք է տրամադրվի անցումային սահմանափակ ժամանակահատված, որի ընթացքում նրանք կարող են հեղինակի մահից հետո վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը չկիրառել նրա իրավահաջորդների օգտին,

18) վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը պետք է տարածվի վերավաճառքի բոլոր գործողությունների վրա, բացառությամբ, երբ դրանք իրականացվում են անմիջականորեն որպես անհատ գործող անձանց միջև՝ առանց արվեստի շուկայի մասնագետի մասնակցության: Այդ իրավունքը չի տարածվում որպես անհատ գործող անձանց կողմից այն թանգարաններին վերավաճառքի վրա, որոնք շահույթ չեն հետապնդում և բաց են հանրության համար: Ինչ վերաբերում է այն հատուկ դեպքերին, երբ պատկերասրահները ստեղծագործություններ են ձեռք բերում անմիջապես հեղինակներից, անդամ պետություններին պետք է թույլատրվի վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը չկիրառել ստեղծագործությունների վերավաճառքի այն գործողությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ձեռքբերումից հետո երեք տարվա ընթացքում: Հեղինակի շահը նույնպես պետք է հաշվի առնվի՝ չկիրառումը սահմանափակելով

⁶ ՊՏ L 290, 24.11.1993թ., էջ 9:

վերավաճառքի այն գործողությունների նկատմամբ, որոնց դեպքում վերավաճառքի գինը չի գերազանցում 10000 եվրոն,

19) պետք է հստակեցնել, որ սույն Հրահանգով կատարվող համապատասխանեցումը չի կիրառվում գրողների ու կոմպոզիտորների բնօրինակ ձեռագրերի նկատմամբ,

20) պետք է սահմանվեն արդյունավետ կանոններ՝ հիմնվելով վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի ոլորտում ներպետական մակարդակում արդեն ձեռք բերված փորձի վրա: Այն ստեղծագործությունների դեպքում, որոնց սկզբնական արժեքն աճել է, նպատակահարմար է հեղինակային վարձատրությունը հաշվարկել որպես վաճառքի գնի և ոչ որպես արժեքի աճի տոկոս,

21) պետք է համապատասխանեցվեն արվեստի այն ստեղծագործությունների տեսակները, որոնց վրա տարածվում է վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը,

22) նվազագույն շեմից ցածր հեղինակային վարձատրություններ չկիրառելը կարող է օգնել խուսափելու հավաքագրման ու վարչական՝ հեղինակի եկամտի համեմատ անհամաչափ բարձր ծախսերից: Այնուամենայնիվ, լրացուցչության սկզբունքին համապատասխան, անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան սահմանելու Համայնքում գործող շեմից ավելի ցածր ներպետական շեմեր՝ ի նպաստ սկսնակ հեղինակների շահերի: Հաշվի առնելով, որ այդ գումարները փոքր են, քիչ հավանական է, որ այս շեղումն էական ազդեցություն կունենա ներքին շուկայի պատշաճ գործունեության վրա,

23) տարբեր անդամ պետությունների կողմից վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի կիրառման համար սահմանված դրույքաչափերը ներկայումս զգալիորեն տարբերվում են: Մոդեռն և ժամանակակից արվեստի ստեղծագործությունների ներքին շուկայի արդյունավետ գործունեության համար պահանջվում է հնարավորինս միասնական դրույքաչափերի ամրագրում,

24) արվեստի ստեղծագործությունների բնօրինակների շուկայում առկա բազմազան շահերը համաձայնեցնելու նպատակով անհրաժեշտ է հիմնել մի համակարգ, որը բաղկացած կլինի մի քանի գնային տիրույթների համար նախատեսված դրույքաչափերի նվազող սանդղակից: Անհրաժեշտ է նվազեցնել վաճառքի իրականացման վայրի տեղափոխման և վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի մասին Համայնքի կանոնների շրջանցման ռիսկը,

25) հեղինակային վարձատրություն վճարող անձը սկզբունքորեն պետք է լինի վաճառողը: Անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան շեղումներ նախատեսելու այս սկզբունքից՝ վճարման համար պատասխանատվության առումով: Վաճառողն այն անձը կամ կազմակերպությունն է, որի անունից իրականացվում է վաճառքը,

26) անհրաժեշտ է ապահովել, որպեսզի շեմն ու դրույքաչափերը պարբերաբար ճշգրտվեն: Այդ նպատակով, անհրաժեշտ է Հանձնաժողովին վերապահել անդամ պետություններում վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի կիրառման և Համայնքում արվեստի շուկայի վրա գործած ազդեցության մասին պարբերական զեկույցներ կազմելու և անհրաժեշտության դեպքում նաև սույն Հրահանգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկներով հանդես գալու գործառնությունը,

27) պետք է սահմանել հեղինակային վարձատրություն ստանալու իրավունք ունեցող անձանց՝ պատշաճ կերպով հաշվի առնելով լրացուցչության սկզբունքը: Նպատակահարմար չէ սույն Հրահանգի միջոցով գործողություններ ձեռնարկել անդամ պետությունների՝ իրավահաջորդության մասին իրավական ակտերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, հեղինակի

իրավահաջորդները պետք է կարողանան նրա մահից հետո լիակատար կերպով օգտվել վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքից՝ առնվազն վերը նշված անցումային ժամանակահատվածի ավարտից հետո,

28) անդամ պետությունները պատասխանատու են վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի իրականացումը կարգավորելու համար, հատկապես դրա կառավարման առումով: Այդ առումով հնարավոր տարբերակներից մեկը կառավարումն է փոխօգնության միության կողմից: Անդամ պետությունները պետք է ապահովեն փոխօգնության միությունների գործունեության թափանցիկությունն ու արդյունավետությունը: Անդամ պետությունները պետք է նաև ապահովեն այլ անդամ պետությունների քաղաքացի հանդիսացող հեղինակների համար նախատեսված գումարների փաստացի հավաքագրումն ու բաշխումը: Սույն Հրահանգը չի հակասում անդամ պետություններում հավաքագրման ու բաշխման կարգին,

29) վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքից օգտվելը պետք է սահմանափակվի Համայնքի քաղաքացիներով, ինչպես նաև օտարերկրացի հեղինակներով, որոնց երկրները անդամ պետությունների քաղաքացի հանդիսացող հեղինակներին տրամադրում են նման պահպանություն: Անդամ պետությունը պետք է հնարավորություն ունենա այդ իրավունքից օգտվողների շրջանակում ընդգրկելու այն օտարերկրյա հեղինակներին, որոնց բնակության վայրը տվյալ անդամ պետությունում է,

30) անհրաժեշտ է ներմուծել գործարքների վերահսկման համապատասխան ընթացակարգեր՝ անդամ պետությունների կողմից վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի արդյունավետ կիրառումը գործնական միջոցներով ապահովելու համար: Սա ենթադրում է նաև հեղինակի կամ նրա լիազոր ներկայացուցչի՝ հեղինակային վարձատրության վճարման համար պատասխանատու ֆիզիկական կամ իրավաբանական անձից անհրաժեշտ տեղեկություններ ստանալու իրավունքը: Անդամ պետությունները, որոնք նախատեսում են վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի կոլեկտիվ հիմունքներով կառավարում, կարող են նաև նախատեսել, որ միայն կոլեկտիվ հիմունքներով կառավարման համար պատասխանատու մարմինները տեղեկություններ ստանալու իրավունք ունեն,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՑՆ ՀՐԱՇԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Հոդված 1

Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի առարկան

1. Անդամ պետությունները պետք է արվեստի ստեղծագործության բնօրինակի հեղինակի օգտին նախատեսեն վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունք, որը պետք է սահմանվի որպես հեղինակի կողմից ստեղծագործության առաջին փոխանցումից հետո դրա ցանկացած վերավաճառքի գնից հեղինակային վարձատրություն ստանալու իրավունք, որն անօտարելի է և որից չի կարելի հրաժարվել նույնիսկ նախապես:

2. 1-ին պարբերությունում նշված իրավունքը կիրառվում է վերավաճառքի բոլոր գործողությունների նկատմամբ, որոնք իրականացվում են որպես վաճառող, գնորդ կամ

միջնորդ հանդես եկող արվեստի շուկայի մասնագետի (ինչպիսիք են վաճառարահները, պատկերասրահները) և, ընդհանուր առմամբ, արվեստի ստեղծագործությունների առուվաճառքով զբաղվող գործակալների միջոցով:

3. Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ 1-ին պարբերությունում նշված իրավունքը չի կիրառվում վերավաճառքի գործողությունների նկատմամբ, եթե վաճառողը ստեղծագործությունը ձեռք է բերել անմիջապես հեղինակից՝ այդ վերավաճառքից ավելի քիչ քան երեք տարի առաջ, և եթե վերավաճառքի գինը չի գերազանցում 10000 եվրոն:

4. Հեղինակային վարձատրությունը վճարում է վաճառողը: Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ 2-րդ պարբերությունում նշված ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից մեկը, բացի վաճառողից, միանձնյա կամ վաճառողի հետ համատեղ պատասխանատվություն կրի հեղինակային վարձատրության վճարման համար:

Հոդված 2

Արվեստի ստեղծագործությունները, որոնց վրա տարածվում է վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը

1. Սույն Հրահանգի նպատակներով, «արվեստի ստեղծագործության բնօրինակ» նշանակում է գրաֆիկական կամ պլաստիկ արվեստի ստեղծագործություններ, ինչպես օրինակ, նկարներ, կոլաժներ, գեղանկարներ, զծանկարներ, փորագրանկարներ, արտատպված նկարներ, վիմագրություններ, քանդակներ, գոբելեններ, խեցեգործական իրեր, ապակե իրեր և լուսանկարներ՝ պայմանով, որ դրանք պատրաստվել են հենց հեղինակի կողմից կամ արվեստի ստեղծագործության բնօրինակ համարվող պատճեններ են:

2. Արվեստի ստեղծագործությունների այն պատճենները, որոնց վրա տարածվում է սույն Հրահանգը, և որոնք սահմանափակ թվով պատրաստվել են հենց հեղինակի կողմից կամ նրա թույլտվությամբ, սույն Հրահանգի նպատակներով համարվում են արվեստի ստեղծագործության բնօրինակներ: Նման պատճենները սովորաբար կհամարակալվեն, կստորագրվեն կամ որևէ այլ պատշաճ կերպով կհաստատվեն հեղինակի կողմից:

ԳԼՈՒԽ II

ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 3

Շեմը

1. Վաճառքի նվազագույն գինը, որի դեպքում 1-ին հոդվածում նշված վաճառքի նկատմամբ կիրառվում է վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը, սահմանում են անդամ պետությունները:

2. Վաճառքի այդ նվազագույն գինը ոչ մի պարագայում չի կարող գերազանցել 3000 եվրոն:

Հոդված 4

Դրույքաչափերը

1. 1-ին հոդվածով նախատեսված հեղինակային վարձատրությունը սահմանվում է հետևյալ դրույքաչափերով՝

ա) 4 %՝ 50000 եվրոյից բարձր վաճառքի գնի մասնաբաժնի համար.

բ) 3 %՝ 50000,01 եվրոյից 200000 եվրո վաճառքի գնի մասնաբաժնի համար.

գ) 1 %՝ 200000,01 եվրոյից 350000 եվրո վաճառքի գնի մասնաբաժնի համար.

դ) 0,5 %՝ 350000,01 եվրոյից 500000 եվրո վաճառքի գնի մասնաբաժնի համար.

ե) 0,25 %՝ 500000 եվրոյից բարձր վաճառքի գնի մասնաբաժնի համար.

Այնուամենայնիվ, հեղինակային վարձատրության ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 12500 եվրոն:

2. Շեղում կատարելով 1-ին պարբերությունից՝ անդամ պետությունները պարբերություն 1 «ա»-ում նշված վաճառքի գնի մասնաբաժնի համար կարող են կիրառել 5% դրույքաչափ:

3. Եթե վաճառքի համար սահմանված նվազագույն գինը պետք է լինի 3000 եվրոյից ցածր, ապա անդամ պետությունները սահմանում են նաև մինչև 3000 եվրո վաճառքի գնի մասնաբաժնի համար կիրառվող դրույքաչափ. այդ դրույքաչափը չի կարող լինել 4 %-ից ցածր:

Հոդված 5

Հաշվարկման հիմքը

3-րդ և 4-րդ հոդվածներում նշված վաճառքի գները հարկեր չեն ներառում:

Հոդված 6

Հեղինակային վարձատրություն ստանալու իրավունք ունեցող անձինք

1. 1-ին հոդվածով նախատեսված հեղինակային վարձատրությունը վճարվում է ստեղծագործության հեղինակին, իսկ նրա մահից հետո՝ նրա իրավահաջորդներին՝ հոդված 8 «2»-ի դրույթների պահպանմամբ:

2. Անդամ պետությունները կարող են նախատեսել 1-ին հոդվածով նախատեսված հեղինակային վարձատրության պարտադիր կամ կամընտիր կոլեկտիվ հիմունքներով կառավարում:

Հոդված 7

Հեղինակային վարձատրություն ստանալու իրավունք ունեցող երրորդ երկրների քաղաքացիները

1. Անդամ պետությունները պետք է նախատեսեն, որ երրորդ երկրների քաղաքացիներ հանդիսացող հեղինակները և, հոդված 8«2»-ի դրույթների պահպանմամբ, նրանց իրավահաջորդները, սույն Հրահանգին և տվյալ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան օգտվում են վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքից, միայն եթե հեղինակի կամ նրա իրավահաջորդի քաղաքացիության երկրի օրենսդրությունը նախատեսում է անդամ պետությունների հեղինակների կամ նրանց իրավահաջորդների՝ վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի պահպանություն:

2. Անդամ պետությունների տրամադրած տեղեկությունների հիման վրա Հանձնաժողովը հնարավորինս սեղմ ժամկետներում հրապարակում է այն երրորդ երկրների ինդիկատիվ ցանկ, որոնք բավարարում են 1-ին պարբերությունով սահմանված պայմանը: Այդ ցանկը մշտապես թարմացվում է:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է անդամ պետության քաղաքացի չհանդիսացող, բայց տվյալ անդամ պետությունում բնակության վայր ունեցող հեղինակների նկատմամբ կիրառել վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի պահպանության՝ իր քաղաքացիների նկատմամբ կիրառվող իրավական ռեժիմը:

Հոդված 8

Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի պահպանության ժամկետը

1. Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի պահպանության ժամկետը պետք է համապատասխանի թիվ 93/98/ԵՏՀ հրահանգի 1-ին հոդվածով սահմանված ժամկետին:

2. 1-ին պարբերությունից շեղում կատարելով՝ այն անդամ պետություններից, որոնք վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը չեն կիրառում 13-րդ հոդվածում նշված ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, մինչև ամենաուշը 2010 թվականի հունվարի 1-ին ավարտվող ժամանակահատվածում չի պահանջվում հեղինակի մահից հետո վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը կիրառել նրա իրավահաջորդների օգտին:

3. Անդամ պետությանը, որի նկատմամբ կիրառվում է 2-րդ պարբերությունը, անհրաժեշտության դեպքում կարող է տրվել ևս երկու տարի, որպեսզի այդ անդամ պետության տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն տրվի հարմարվելու վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի համակարգին՝ միևնույն ժամանակ պահպանելով իրենց տնտեսական կենսունակությունը, նախքան այդ պետությունից կպահանջվի հեղինակի մահից հետո վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը կիրառել նրա իրավահաջորդների օգտին: 2-րդ պարբերությունում նշված ժամանակահատվածի ավարտից առնվազն 12 ամիս առաջ, համապատասխան անդամ պետությունը տեղեկացնում է Հանձնաժողովին՝ ներկայացնելով իր հիմնավորումները, որպեսզի Հանձնաժողովը, համապատասխան խորհրդակցություններից հետո, կարողանա եզրակացություն տալ՝ նման տեղեկություն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում: Եթե անդամ պետությունը չի հետևում Հանձնաժողովի եզրակացությանը, ապա մեկ ամսվա

ընթացքում այդ մասին տեղեկացնում է Հանձնաժողովին և հիմնավորում իր որոշումը: Անդամ պետության ծանուցումն ու ներկայացրած հիմնավորումը և Հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում են Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում և ուղարկվում Եվրոպական պառլամենտ:

4. Վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը միջազգային մակարդակում կիրառելու նպատակով իրականացվող միջազգային բանակցությունների՝ հոդված 8«2»-ում և «3»-ում նշված ժամանակահատվածում հաջող ավարտի դեպքում, Հանձնաժողովը ներկայացնում է համապատասխան առաջարկներ:

Հոդված 9

Տեղեկություն ստանալու իրավունքը

Անդամ պետությունները պետք է նախատեսեն, որ վերավաճառքից հետո երեք տարվա ընթացքում, 6-րդ հոդվածի համաձայն իրավասու անձինք կարող են հոդված 1«2»-ում նշված արվեստի շուկայի ցանկացած մասնագետից պահանջել տրամադրել ցանկացած տեղեկություն, որ կարող է անհրաժեշտ լինել վերավաճառքի հետ կապված հեղինակային վարձատրության վճարումն ապահովելու համար:

ԳԼՈՒԽ III

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 10

Գործողությունը ժամանակի մեջ

Սույն Հրահանգը կիրառվում է 2-րդ հոդվածով սահմանված արվեստի ստեղծագործությունների այն բոլոր բնօրինակների նկատմամբ, որոնք 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս պահպանվում են անդամ պետությունների՝ հեղինակային իրավունքի ոլորտի օրենսդրությամբ կամ այդ օրվա դրությամբ բավարարում են սույն Հրահանգի դրույթներով պահպանության համար նախատեսված չափորոշիչները:

Հոդված 11

Վերանայման վերաբերյալ դրույթ

1. Ոչ ուշ, քան 2009 թվականի հունվարի 1-ը, իսկ դրանից հետո յուրաքանչյուր չորս տարին մեկ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին, Խորհրդին և Տնտեսական ու սոցիալական կոմիտեին է ներկայացնում սույն Հրահանգի կիրարկման ու գործողության մասին զեկույց՝ հատուկ ուշադրություն դարձնելով Համայնքում մոդեռն և ժամանակակից արվեստի շուկայի մրցունակությանը, հատկապես ինչ վերաբերում է Համայնքի դիրքորոշմանը կապված այն համապատասխան շուկաների հետ, որոնք չեն կիրառում վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքը, ինչպես նաև՝ անդամ պետություններում գեղարվեստական ստեղծարարության խթանմանն ու կառավարման ընթացակարգերին: Այն, մասնավորապես, ուսումնասիրում է ներքին շուկայի վրա դրա ազդեցությունը և վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունքի ներմուծման արդյունքներն այն անդամ պետություններում, որոնք չեն կիրառել այդ իրավունքն իրենց ներպետական իրավունքում՝ նախքան սույն Հրահանգն ուժի մեջ մտնելը: Անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովը,

այդ ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները հաշվի առնելու նպատակով, ներկայացնում է առաջարկներ հեղինակային վարձատրության նվազագույն շեմն ու դրույքաչափերը ճշգրտելու մասին, ինչպես նաև հոդված 4«1»-ում ամրագրված առավելագույն գումարի հետ կապված առաջարկներ և ցանկացած այլ առաջարկ, որն անհրաժեշտ է համարում սույն Հրահանգի արդյունավետությունը բարձրացնելու համար:

2. Սույն Հրահանգով ստեղծվում է Փոխադարձ կապն ապահովող կոմիտե: Այն կազմված է անդամ պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչներից: Հանձնաժողովի ներկայացուցիչներից մեկը նախագահում է կոմիտեն, և այն նիստեր է գումարում կամ նախագահի նախաձեռնությամբ, կամ որևէ անդամ պետության պատվիրակության խնդրանքով:

3. Հանձնաժողովի գործառույթները հետևյալն են՝

– խորհրդատվություն կազմակերպել սույն Հրահանգի կիրառումից բխող բոլոր հարցերի վերաբերյալ.

– հեշտացնել Հանձնաժողովի ու անդամ պետությունների միջև Համայնքի արվեստի շուկայում տեղի ունեցող համապատասխան զարգացումների մասին տեղեկությունների փոխանակումը:

Հոդված 12

Կիրարկումը

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը (այլ նորմատիվ իրավական ակտերը) և վարչական ակտերը գործողության մեջ են դնում ոչ ուշ, քան մինչև 2006 թվականի հունվարի 1-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանում են անդամ պետությունները:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ներպետական իրավունքի դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 13

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակման օրվանից:

Հոդված 14

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2001 թվականի սեպտեմբերի 27-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Ն. Ֆոնտեն

Խորհրդի կողմից՝

Նախագահ Ս. Պիկե